Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված

Կ-633-01.06.2020-ՏՏԳԲ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում՝ «վճարները» բառը փոխարինել «վճարների տեսակները» բառերով.

2. 3-րդ մասում՝ «տուրքեր և վճարներ» բառերը փոխարինել «տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը» բառերով.

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) համայնքի վարչական տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար:

2. լրացնել նոր 4.1-ին և 4.2-րդ կետեր.

«4.1) համայնքի վարչական տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար.

4.2) համայնքի վարչական տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվության համար:»:

3. 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար:».

4. լրացնել նոր 5.1-ին և 5.2-րդ կետեր.

«5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար:».

5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվության համար:»:

5. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) համայնքի վարչական տարածքում՝ խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում՝ տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար:».

6. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում՝ տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար:».

7. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) համայնքի վարչական տարածքում՝ հանրային սննդի կազմակերպման և իրականացման համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան, տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար:».

8. 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը (զինանշան, անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 14-րդ կետում՝ «նկարչական» բառից հետո լրացնել «, սպորտի» կետադրական նշանով և բառով.

2. 18-րդ կետում «համայնքի» բառը փոխարինել «համայնքապետարանի աշխատակազմի» բառերով.

3. լրացնել նոր՝ 20-21-րդ կետեր.

«20) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար,

21) համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող համայնքի կողմից ծառայություններ տրամադրելու համար:»:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի.

1. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Համայնքներում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելիս ավագանին կարող է առաջնորդվել գոտիավորման սկզբունքով, ընդ որում՝ ավագանու որոշմամբ սահմանված գոտիների համար կարող են սահմանվել տեղական տուրքերի և վճարների տարբեր դրույքաչափեր:».

2. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Գյուղական կամ քաղաքային բնակավայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային բնակավայրերի համար՝ օրենքով կարող են սահմանվել տեղական տուրքերի դրույքաչափերի տարբեր գործակիցներ:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) համայնքի վարչական տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ:».

2. լրացնել նոր 4.1-ին և 4.2-րդ կետեր.

«4.1) համայնքի վարչական տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4.2) համայնքի վարչական տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ:»:

3. 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ:».

4. լրացնել նոր 5.1-ին և 5.2-րդ կետեր.

«5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ:».

5. 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

6) համայնքի վարչական տարածքում՝ խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում՝ տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ:».

6. 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում՝ տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ:».

7. 12-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) համայնքի վարչական տարածքում՝ հանրային սննդի կազմակերպման և իրականացման համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան, տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝».

8. 12-րդ կետի «ա» ենթակետի առաջին պարբերությունը «համար՝» բառից հետո լրացնել «երեք հազար դրամից» բառերով.

9. 12-րդ կետի «բ» ենթակետի առաջին պարբերությունը «համար՝» բառից հետո լրացնել «հինգ հարյուր դրամից» բառերով.

10. 15-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«15) Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը (զինանշան, անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար հարյուր հազար դրամ:»:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի համար կարող են հաշվարկվել 0.3, գյուղական այլ բնակավայրերի համար՝ 0.5, քաղաքային այլ բնակավայրերի համար՝ 1.0-3.0, իսկ Երևան քաղաքում՝ 1.0-7.0 գործակիցների կիրառմամբ:»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 9-14-րդ, 16-րդ և 19-րդ կետերում՝ «գումարի» բառը փոխարինել «վճարի» բառով.

2. 18-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«18) համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար:».

3. 19-րդ կետից հետո լրացնել նոր 20-րդ և 21-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«20) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար,

21) համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-633-01.06.2020-ՏՏԳԲ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի (այսուհետ~~-~~՝ Օրենք) 8-րդ հոդվածի~~-~~՝

1~~)~~. 2-րդ մասում~~-~~՝ «վճարները» բառը փոխարինել «վճարների տեսակները» բառերով.

2~~)~~. 3-րդ մասում~~-~~՝ «տուրքեր և վճարներ» բառերը փոխարինել «տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը» բառերով.

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում~~-~~՝

1~~)~~. 4-րդ կետը շարադրել ~~հետևյալ~~նոր խմբագրությամբ.

«4) համայնքի վարչական տարածքում~~-~~՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար:

2~~)~~. լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր 4.1-ին և 4.2-րդ ~~կետերով~~կետեր.

«4.1) համայնքի վարչական տարածքում~~-~~՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար.

4.2) համայնքի վարչական տարածքում~~-~~՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվության համար:»:

3~~)~~. 5-րդ կետը շարադրել ~~հետևյալ~~նոր խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում~~-~~՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար:».

4~~)~~. լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր 5.1-ին և 5.2-րդ ~~կետերով~~կետեր.

«5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար:».

5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվության համար:»:

5). 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) համայնքի վարչական տարածքում՝ խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում՝ տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար:».

6). 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում՝ տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար:».

7). 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) համայնքի վարչական տարածքում՝ հանրային սննդի կազմակերպման և իրականացման համայնքի ավագանու որոշմամբ հաստատված սահմանված կանոններին համապատասխան, տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար:».

8). 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը (զինանշան, անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ մասում՝

1). 14-րդ կետը՝ կետում՝ «նկարչական» բառից հետո լրացնել «, սպորտի» կետադրական նշանով և բառով.

2). 18-րդ կետում «համայնքի» բառը փոխարինել «համայնքապետարանի աշխատակազմի» բառերով.

3~~) 19-րդ կետից հետո~~. լրացնել նոր ~~կետերով հետևյալ բովանդակությամբ՝~~ 20-21-րդ կետեր.

«20) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար,

21) համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող համայնքի կողմից ծառայություններ տրամադրելու համար:»:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի.

1~~)~~. 2-րդ մասը շարադրել ~~հետևյալ~~նոր խմբագրությամբ.

«Համայնքներում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելիս ավագանին կարող է առաջնորդվել գոտիավորման սկզբունքով, ընդ որում~~՝~~ ավագանու որոշմամբ սահմանված գոտիների համար կարող են սահմանվել տեղական տուրքերի և վճարների տարբեր դրույքաչափեր:».

2~~)~~. 4-րդ մասը շարադրել ~~հետևյալ~~նոր խմբագրությամբ.

«4. Գյուղական կամ քաղաքային բնակավայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային բնակավայրերի համար~~՝~~ օրենքով կարող են սահմանվել տեղական տուրքերի դրույքաչափերի տարբեր գործակիցներ:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում~~՝~~

1~~)~~. 4-րդ կետը շարադրել ~~հետևյալ~~նոր խմբագրությամբ.

«4) համայնքի վարչական տարածքում~~՝~~ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար~~՝~~ օրացուցային տարվա համար~~՝~~ երկու հարյուր հազար դրամ:».

2~~)~~. լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր 4.1-ին և 4.2-րդ ~~կետերով~~կետեր.

«4.1) համայնքի վարչական տարածքում~~՝~~ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար~~՝~~ օրացուցային տարվա համար~~՝~~ երկու հարյուր հազար դրամ.

4.2) համայնքի վարչական տարածքում~~՝~~ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվության համար~~՝~~ օրացուցային տարվա համար~~՝~~ երկու հարյուր հազար դրամ:»:

3~~)~~. 5-րդ կետը շարադրել ~~հետևյալ~~նոր խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում~~՝~~ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար~~՝~~ օրացուցային տարվա համար~~՝~~ հարյուր հազար դրամ:».

4~~)~~. լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր 5.1-ին և 5.2-րդ ~~կետերով~~կետեր.

«5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում~~՝~~ օրենքով և այլ իրավական ակտերով

սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ:».

5). 6-րդ կետը շարադրել հետևյալնոր խմբագրությամբ.

6) համայնքի վարչական տարածքում՝ խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում՝ տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ:».

6). 7-րդ կետը շարադրել հետևյալնոր խմբագրությամբ.

«7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում՝ տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ:».

7). 12-րդ կետըկետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) համայնքի վարչական տարածքում՝ հանրային սննդի կազմակերպման և իրականացման համայնքի ավագանու որոշմամբ հաստատվածսահմանված կանոններին համապատասխան, տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝».

8). 12-րդ կետի «ա» ենթակետի առաջին պարբերությունը «համար՝»» բառից հետո լրացնել «երեք հազար դրամից» բառերով.

9). 12-րդ կետի «բ» ենթակետի առաջին պարբերությունը «համար՝»» բառից հետո լրացնել «հինգ հարյուր դրամից» բառերով.

10). 15-րդ կետը շարադրել հետևյալնոր խմբագրությամբ.

«15) Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը (զինանշան, անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների

մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար հարյուր հազար դրամ:»:

Հոդված ~~7.~~6. Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել ~~հետևյալ~~նոր խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի համար կարող են հաշվարկվել 0.3, գյուղական այլ բնակավայրերի համար՝ 0.5, քաղաքային այլ բնակավայրերի համար՝ 1.0-3.0, իսկ Երևան քաղաքում՝ 1.0-7.0 գործակիցների կիրառմամբ:»:

Հոդված ~~8.~~7. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝

1~~)~~. 9-14-րդ, 16-րդ և 19-րդ կետերում՝ «գումարի» բառը փոխարինել «վճարի» բառով.

2~~)~~. 18-րդ կետը շարադրել ~~հետևյալ~~նոր խմբագրությամբ.

«18) համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար:».

3~~)~~. 19-րդ կետից հետո լրացնել նոր 20-րդ և 21-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«20) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար,

21) համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով:»:

Հոդված ~~9.~~8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթի

վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Կառավարություն	«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Նախագծի 2-րդ հոդվածի 7-րդ մաս Նախագծի 5-րդ հոդվածի 7-րդ մաս	Առաջարկում նոր խմբագրությամբ շարադրված 12-րդ կետում «որոշմամբ հաստատված» բառերը փոխարինել «որոշմամբ սահմանված» բառերով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանվում են համայնքի ավագանու կողմից: Սույն առաջարկը բխում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետից:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է
		Նախագծի 2-րդ հոդվածի 8-րդ մաս	Նոր խմբագրությամբ շարադրված Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում նախատեսվում է «համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի խորհրդանիշ» հաս կացությունը, մինչդեռ, հարկ է նկատել, որ գործող օրենսդրությամբ՝ խորհրդանիշ ունենալու իրավասություն վերապահված է միայն	Ընդունվել է: Նախագծերի փաթեթում ներառված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»	Ընդունվել է

			Երևան քաղաքին, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետում նշված է միայն զինանշանի մասին: Կարծում ենք նպատակահարմար է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանել համայնքների և համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի՝ խորհրդանիշ ունենալու իրավասու թյունը՝ նախատեսելով խորհրդանիշե րի հնարավոր շրջանակը: Բացի այդ, անհրաժեշտ է ընդգծել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով համայնքի ղեկավարի կամ ավագանու կողմից խորհրդանիշերը (զինանշան, անվանում), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխա տանքների կատարման, ծառայու թյունների մատուցման գործընթաց ներում օգտագործելու համար թույլտվություն տալուն վերաբերող դրույթ նախատեսված չէ:	օրենքի նախագծում կատարվել են լրացումներ:	
		Փաթեթի նախագծերի վերնագրերում	Նշված երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը հա նել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրա վական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: Առաջարկը վերաբերելի է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետու թյան օրենքում լրացում կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերանագրե րում նշված երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերին:	Ընդունվել է Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է

		Փաթեթի նախագծերի 1-ին հոդվածներում	Նշված օրենքի անվանումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի լրիվ անվանմանը ներկայացվող պահանջներին՝ հանելով «Հայաստանի Հանրապետության» բառերը: Առաջարկը վերաբերելի է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի 1-ին հոդվածում նշված «Հայաստանի Հանրապետության» բառերին:	Ընդունվել է Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է
		Նախագծի 1-5-րդ և 8-րդ հոդվածներ	Համարակալված մասերի համարներն առաջարկում ենք տեքստից բաժանել միջակետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերը: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծում 5-րդ հոդվածից հետո շարադրված հոդվածների համարակալումը շտկել՝ ըստ տրամաբանական հաջորդականության:		
		Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-8-րդ մասեր Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-7-րդ, 10-րդ մասեր,	Նշված «հետևյալ» բառն առաջարկում ենք փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:	Ընդունվել է Առաջարկվող փոփոխությունները կատարվել են	Ընդունվել է

		Նախագծի 7-րդ հոդված, Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մաս			
		Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր	Առաջարկում ենք հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը, միաժամանակ նույն մասում՝ «կետերով» բառը փոխարինել «կետեր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է Կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է
		Նախագծի 3-րդ հոդված	Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, առաջարկում ենք. 1) 1-ին մասում «կետը» բառը փոխարինել «կետում» բառով, իսկ «բառով» բառից առաջ լրացնել «կետադրական նշանով և» բառերով, 2) 3-րդ մասում «19-րդ կետից հետո լրացնել նոր կետերով հետևյալ բովանդակությամբ» ձևակերպումը փոխարինել «լրացնել նոր՝ 20-21-րդ կետեր» ձևակերպմամբ:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
		Նախագծի 5-րդ հոդվածի 7-րդ կետ	«12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.» բառերն անհրաժեշտ է փոխարինել «12-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.» բառերով	Ընդունվել է, առաջարկվող փոփոխությունը կատարվել է	Ընդունվել է